



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Օձուն, 077749998, odzun.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 թվականի N 172-Ա

**ԲԱՐՍԵՂ ՄԵԼԻՔԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ 06-112-0437-0051 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՃՇԳՐՏՄԱՆ,
ԳՐԱՆՑՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Բարսեղ Այվազյանի դիմումը, կադաստրի 10/05/2022թ. N ԱՏ-10052022-06-0910 տեղեկանքը, սեփականության իրավունքի գրանցման թիվ 2828362 վկայականը, չափագրողի կողմից տրված հողամասի հաստատված հատակագիծը:

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 13-րդ, 60-րդ և 64-րդ հոդվածներով, Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքի 34 հոդվածով, Կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավունքների պետական գրանցումը կատարվել է որոշակի սխալներով, մասնավորապես արտադրական նշանակության շինությունների կառուցման և սպասարկման համար հողամասերի հատկացումը կատարվել է դեռևս քաղխորհրդի գործկոմի կողմից 1996 թվականից սկսած և հետագայում սահմանազատված 0,15հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը վերահատկացվել է վերջինիս որպես սեփականություն, սակայն գրանցման վկայականում նշվել է որպես այգեգործական-բնակավայրերի նշանակության, այն դեպքում երբ այն երբևէ չի հանդիսացել այգեգործական հողամաս: Արդյունքում ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով օտարման դեպքում կադաստրային արժեքի վճարման պայմանով փոխանցված հողամասը վկայականում նշվել է առանց պայմանի, այն դեպքում երբ դեռևս կատարված չէ կադաստրային արժեքի վճարը. Հարկային պարտավորությունները հատկացման օրվանից կատարվել է որպես արդյունաբերական հողամաս.

Ուստի Բարսեղ Այվազյանի կողմից օրենքով սահմանված կադաստրային արժեքի վճարի պարտավորությունների հետագա կատարման համար անհրաժեշտություն է առաջանում հողամասի նշանակությունը համապատասխանեցնել շինության նշանակությանը:

որոշում եմ.

1. Վերահաստատել և ճշգրտել ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի 40 փողոց թիվ 24 հասցեի 06-112-0437-0051 ծածկագրով Բարսեղ Այվազյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված արտադրական նշանակության 207,4քմ մակերեսով արտադրամասի, 127,4քմ մակերեսով պահեստի կառուցման և սպասարկման համար հատկացված 0,15հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողամասի հողատեսքը և հատակագիծը կազմված չափագրում կատարելու համար որակավորված անձի կողմից.
2. Վերահաստատել և ճանաչել Բարսեղ Այվազյանի սեփականության իրավունքը ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով օտարման դեպքում կադաստրային արժեքի վճարման պայմանով փոխանցված 0,15հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողամասի նկատմամբ.
3. Հողամասի հատակագծում գծագրված 0,15հա մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Համաձայն սույն որոշման և որոշման հավելված հանդիսացող հաստատված հատակագծի կատարել համապատասխանեցում կադաստրային քարտեզում, որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողամաս:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի Վանաձորի ստորաբաժանումում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՏԻՏԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 173-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԴՎԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-017-0020-0010 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՅԻ ՍՊԱՐՏԱԿ ՄԱԹԵՎՈՍԻ ՎԱՀՐԱՄՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածներով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝

որոշում եմ.

հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, հողամասի հատակագիծը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, Արդվի գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21/05/1991 թվականի թիվ 2 որոշումը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Արդվի բնակավայրի կադաստրային քարտեզի 06-017-0020-0010 ծածկագրով, 0,17406 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձ՝ Սպարտակ Մաթևոսի Վահրամյանի՝ ծնված 06.11.1954թ. սեփականությունը:

2. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:


3. Սույն որոշման առաջին կետով սահմանված անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

4. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ



2022թ., օգոստոսի 11 ,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 174-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕԶՈՒՆ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0471-0009 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՀՈՂԱՏԵՍՔԻ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՅԻ ՍԻՄՈՆ, ԿԱՐԵՆ, ԷԴԻԿ ԵՎ ՔՐԻՍՏԻՆԵ
ՓԵՐԻԽԱՆՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 51-54-րդ, 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածներով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝

որոշում եմ.

հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, հողամասի հատակագիծը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը՝ սեղանամատյան թիվ 3007,3008,3009,3010, Օձուն գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15/05/1991 թվականի թիվ 1 որոշումը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Օձուն բնակավայրի կադաստրային քարտեզի 06-112-0471-0009 ծածկագրով, 0,69724 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի հողատեսքի հողամասի նկատմամբ օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձանց՝ ՍԻՄՈՆ ԱՇՈՏԻ ՓԵՐԻԽԱՆՅԱՆԻ՝ ծնված 01.07.1952թ., ՔՐԻՍՏԻՆԵ ՍԻՄՈՆԻ ՓԵՐԻԽԱՆՅԱՆԻ՝ ծնված 14.11.1980թ., ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆԻ ՓԵՐԻԽԱՆՅԱՆԻ՝ ծնված 06.04.1984թ. և ԷԴԻԿ ՍԻՄՈՆԻ ՓԵՐԻԽԱՆՅԱՆԻ՝ ծնված 03.02.1986թ. ընդհանուր բաժնային սեփականությունը:

2. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում

քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:


3. Սույն որոշման առաջին կետով սահմանված անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

4. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՈՐՈՇՈՒՄ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ, N 175-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՏԻՏԱՆՅԱՆԻ ԿՈՐՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕԶՈՒՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով,

Հիմք ընդունելով, որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ շինության հաշվառման մասին թիվ 2022PMBQVZ տեղեկանքը, *հողամասի և շինության հատակագիծը,*

որոշում եմ.

- 06-112-0464-0001 ծածկագրից առանձնացված, 0,1 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
- Օրինականացնել և ճանաչել Օձուն համայնքի սեփականության իրավունքը *Աշոտ Սուրենի Տիտանյանի* կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 06-112-0464-0001 ծածկագրում գտնվող 0,1 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (1988 թվականին կառուցված) ինքնակամ կառուցված 30.00 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
- Սույն որոշումից բխող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման:
- Անշարժ գույքը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

